

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՅ ԿԱՆԱՅՑ 1988-1990թթ. ՍՈՒՄԳԱՅԻԹԻ և ԲԱՔԵՎԻ  
ՈԹՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ\***

### **Իսկուհի Ավանեսյան**

**Բանալի բառեր՝** Աղրբեջան, Սումգայիթ, Բաքու, հայ կանայք, իրավունք, բռնություն, բողոք, զոհ, համրահավաք, վկայություն, ցեղասպանություն, բռնագաղթ, պայքար:

Խորհրդային տասնամյակների ընթացքում Աղրբեջանը հայահալած, Արցախը հայրափելու հետևողական քաղաքականություն էր իրականացնում տարբեր միջոցներով՝ բնակչության իրավունքները ուղարկելով, տնտեսական ճնշումներով, խտրական կադրային քաղաքականությամբ և այլ կամայականություններով: Ոգևորված գործողվան «վերակառուցման» քաղաքականությամբ՝ արցախահայությունը 1988թ. սկզբներից դուրս ելավ պայքարի Յայաստանի հետ վերամիավորվելու համար: Կենտրոնական և աղրբեջանական իշխանությունները, համոզվելով, որ քաղաքական միջոցներով հնարավոր չէ կասեցնել Արցախում ծավալվող ազատագրական շարժումը, որոշեցին կոպտորեն ուղարկել համանարդկային իրավունքի բոլոր չափանիշները, ժողովրդական շարժմանը հակադրել բիրու ուժն ու բռնությունը: Իրականացվեց պետական ահաբեկչություն Սումգայիթում հայերի ցեղասպանություն, որով սկիզբ դրվեց Աղրբեջանի հայության բռնագաղթի առաջին փուլին:

Բարվից 35 կմ հեռավորությամ վրա գտնվող Սումգայիթ քաղաքում 1988թ. փետրվարի 26-ից սկսած հակահայկական հանրահավաքները, որոնք գլխավորում էին քաղաքի կուսաքրօնմերի քարտուղարները [1], վերածվեցին հաշվեհարդարի՝ ուղղված հայերի դեմ: Փետրվարի 27-ից 29-ը ընկած ժամանակահատվածում «Մա և հայերին» կոչով տեղական իշխանությունների աչքի առաջ կատարվեց հայ ազգաբնակչության կոստրած: Նախապես ծրագրված վայրագությունները ուղեկցվում էին հայերի սպանություններով, բնակարանների ավերումով ու թալանով: Առավել դաժան գործողություններ իրականացվեցին հայ կանանց և աղջկների նկատմամբ, ինչի նաև վկայում են դեպքերի ականատեսները [2]: Այդ սպանությունները զարհուրելի էին սպանվածներ, որոնց մեծ մասը խոշտանգումներից ու կտտանքից հետո ողջակիզված, հազարավոր վիրավորներ, հարյուրավոր բռնաբարվածներ, այդ թվում մեծ թվով անչափահասներ:

Պաշտոնական տվյալներով գոհերի թվում էին նաև Էմճա Գրիգորյանը (Մարտակերտի շրջանի Յաթերք գյուղից), Ռազմելա Արուշանյանը, Լյուս Ավագյանը (Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղից), Իրինա Մելքոնյանը (Յադրությ շրջանից), Ելենա Բարյանը, Սեղա Դամիելյանը, Ռահիսա Մելքոնյանը, Փիրուզա Մելքոնյանը, Թամարա Մեհտիլան, Յերսիլիա Մովսեսովան, Արույակ Սահյանը, Նատալյա Վարդանյանը [3]:

Իրադարձությունների ականատես Ռայա Թովմասյանի վկայությամբ ոչ ոստիկանությունը, ոչ շտապօգնությունը, ոչ էլ տեղական վարչակազմը չարձագանքեցին օգնության կանչերին: Նույնիսկ տան բակում կանգնած զինվորները չէին խառնվում այդ իրադարձություններին՝ ասելով, որ իրենք համապատասխան իրաման չունեն [4]: Բազ-

\* Հոդվածն ընդունվել է 19.02.19:

Հոդվածը տպագրության է Երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.թ., դոցենտ Ն. Բաղդասարյանը:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

մաթիվ են նման վկայությունները:

Արցախյան ազատամարտի մասնակից կին-ազատամարտիկ Սիրանուշ Առուշան-յանը, ով Սումգայիթի ողբերգության ականատեսն է եղել, վկայում է.

«Ես Սումգայիթում տեսա հայ կանանց, աղջիկների, տղամարդկանց, պապիկների ու տափիկների, մանուկների, անգամ հղի կանանց գազանային սպանությունները, նրանց կենդանի-կենդանի վառելը, մեծերին ու փոքրերին լուսամուտներից դուս նետելը և նման շատ ու շատ գազանությունները: Ես ականատես էի Էմնա Գրիգորյանի, Իրինա Սելբումյանի, նրա հոր և մոր, երկու եղբայրների ու շատ շատերի գազանային սպանությունների» [5]:

Ակնհայտ էր, որ հայերի ցեղասպանությունը Սումգայիթում նպատակ էր հետապնդում կանխել Արցախյան ազատագրական պայքարի տարածումը:

Կարինե Սելբումյանը, ով սումգայիթյան ջարդերի ժամանակ իր ընտանիքի հինգ անդամների էր կորցրել, փաստում է, որ աղրեցանցի ջարդարարները նախօրոք պատրաստվել գինվել և իրենց ծեչքերում են ունեցել հայ ընտանիքների ցուցակները՝ ըստ բնակության հասցեների: «Նրանք բարձրախոսներով մեր անուններն էին կանչում, դաժանաբար սպանում ու վառում մեր հարազատներին և մտերիմներին ուստիկանության ու խորհրդային գինվորների աչքի առաջ, որոնք չէին խառնվում այդ վայրագություններին՝ ասելով, թե համապատասխան հրաման չունեն...», - վկայում է Կարինե Սելբումյանը [6]:

Միայն փետրվարի 29-ի գիշերը երեք օր ուշացումով, միութենական կենտրոնական իշխանությունները գործ մտցրին Սումգայիթ: Մեծ դժվարությամբ հաջողվեց դադարեցնել արյունահեղությունը և քաղաքից դուրս բերել ողջ մնացած հայերին: Սումգայիթի 18 հազար հայ բնակչությունը մի քանի օրում հեռացավ քաղաքից: Ավելի քան 3 հազար փախստականներ հաստատվեցին Յայաստանում, իսկ մնացածները պատպարվեցին աշխարհի տարբեր անկյուններում:

Պաշտոնական տվյալներով տանջամահ էր արվել 32 մարդ, խոշտանգվել ու ծանր վիրավորվել ավելի քան 200 հոգի[7]: Մինչդեռ բրիտանացի հետազոտող թունաս ղեկավար իր «Սև այգի. Յայաստան ու Աղրեցանը խաղաղության և պատերազմի միջև» գրում գրում է. «Եթե ուշադրություն դարձնեք մահվան մասին տրված թժկական վկայականների գրանցված է եղել առնվազն 115 մահ...Բնական մահերի նման քանակությունը բացառվում է թեկուզ այն պատճառով, որ նախորդ երկու ամիսներին գրանցվել է ոչ ավելի, քան 72 մահ»[8]: 1988թ. գարնանը Յայկոմկուսի կենտրոնում ստացված մի փաստաթղթում նշվում է, որ Սումգայիթում սպանվել է ոչ թե 26 կամ 32, այլ ավելի քան 400 հայ և խեղվել ու տուժել է մոտ 1000մարդ, որոնց շարքում մեծ թվով կանայք, ծերունիներ և երեխաներ: Ենտքերը թաքցնելու համար դիակները տարվել են Բաքու, հանրապետության այլ քաղաքներ կամ էլ նետվել են ծովը: Փաստերը խոսում են այն մասին, որ արյունալի շարասյունը նախօրոք մտածված և կազմակերպված եղել է Աղրեցանի վերադաս իշխանության ղեկավարների կողմից[9]: Զարդարարներից պատասխանատվության ենթարկվեց միայն 94 մարդ, և նրանցից միայն մեկի նկատմամբ մահապատժի դատավճիռ կայացվեց: Մնացածներին ներկայացվեցին սպանությունների, բռնարարությունների, ջարդերի և այլ մեղադրանքներ, ընդ որում, առանց բացառության, բոլոր դեպքերում հանցագործության հիմնավորումն անվանվեց «խուիզամական գործողություն»:

Ցանկացած հակամարտություն գրկանը է կանանց համար, առավելապես երբ կրվի դաշտը հարազատ հողում է, սեփական տան մատուցներում: Այս դեպքում արդեն կնոջ հոգեկան տառապանքներին գումարվում է մարմնական բռնությունների ենթարկվելու վտանգը:

Սումգայիթում առավել սաղիստական գործողություններ կիրառվեցին հատկապես կանանց նկատմամբ:

Սումգայիթյան ոճիրը վճռական ազդեցություն ունեցավ շարժման հետագա ըն-

## ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀԾՈՅՑ ՀԱՄԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

թագրի վրա: Այն ավելի համախմբեց համազգային նպատակների իրագործման գաղափարի շուրջ և ՝ Հայաստանում, Արցախում վերսկսվեցին բողոքի բազմահազարամոց ցույցերն ու հանրահավաքները, որի մասմակցիները պահանջում էին նաև քաղաքական գնահատական տալ սումգայիթյան եղեռնագործությանը և պատժել հանցագործներին:

Դատկանշական էին 1988թ. մարտի 6-ին և մարտի 8-ին Ստեփանակերտի հուշահամալիրում Սումգայիթի նահատակների հիշատակին նվիրված սգո հանրահավաքները, որտեղ ելույթ ունեցան նաև ժամանակակից Պալատյանը, Ռոզա Սարգսյանը, Արգիկ Սիսիթյանը, Նարյա Բաղդասարյանը, Սվետլանա Պետրոսյանը: Նրանք դատապարտեցին սումգայիթյան սպանողը ու պահանջնեցին հանցագործներին դատական պատասխանատվության ենթարկել [10]:

Սումգայիթի ցեղասպանությունը լրության մատնելու քաղաքականությունը, նրան ծնունդ տված պատճառների բողարքումը և նրա կազմակերպիչների անպատճի բողնելը հնարավոր դարձրին, որ առքեքանակամ իշխանությունները հանրապետության ողջ տարածքով մեկ հրականացնեն էթնիկ զոտումներ, որոնք էլ իրենց գագաթնակետին հասան 1990թ. հունվարին Բաքվում կազմակերպած արյունալի օրերին:

Դակահայկական հիստերիայի մոլուցով բռնկված Աղրեջանի ժողովրդական ճակատ կուսակցությունը (ԱժՃԿ), հանրապետության իշխանությունների հետ միասին, 1990թ. հունվարի 13-ին Բաքվում կազմակերպեցին հայ բնակչության ջարդեր, որոնք տևեցին մեկ շաբաթ [11]: Այդ օրերին Բաքվի փողոցներում վիտում էին ազգայնական ակտիվիստները: Դայտնի ծշմարտություն է, որ անպատճելիությունը ծնում է նոր հանցագործություններ: Մարդկանց նետում էին վերին հարկերի իրենց բնակարանների պատշաճամբներից, ամբողջ հարձակվում և երկաթյա ծողներով, դանակներով սպանում էր հայերին, բռնաբարում կանաց, զավթում նրանց բնակարանները, ունեցվածքը [12]: Զուտ ազգային պատկանելության համար տեղի շուրջ 400 հազարանոց հայ համայնքը ենթարկվեց բռնությունների, կոտորածի ու բռնատեղահանվեց քաղաքից:

Զարդերից հայերը մազապուրծ էին լինում՝ բողնելով ամեն ինչ, ապաստան գտնելով Դայաստանում, Արցախում, ինչպես նաև այլ երկրներում: Դեպքերի ականատես նելլի Դուկասյանը վկայում է. «Ես իմ տան պատուհանից բաքում նայում և տեսմում էի, թե ինչ է կատարվում փողոցում. խարույկներ էին վառում, թալանում հայերի ունեցվածքով բեռնված մերենաները... Մարդկանց և նրանց կահկարասին նետում էին բարձրահարկ շենքերից, դա սարսափելի տեսարան էր: Եթե մենք խնդրում էինք զինվորների օգնությունը, նրանք ասում էին, որ հրաման չունեն...»[13]: Այդ ողբերգական իրադարձությունների հորձանուտում հայտնված կանաց վկայություններում բազմաթիվ են ջարդարարների վայրագությունների մասին փաստերը:

Բաքվի հունվարյան դեպքերից փրկված Շայա Դարությունյանը, խոսելով կատարվածի մասին, վկայում է, թե ինչպես հունվարի 14-ին իր տուն ներխուժեցին 25-30 հոգի: Դանակներով զինված՝ փող պահանջեցին: Աերժում ստանալով նրանցից մեկը ծիծաղելով ասաց. «ատամներդ կիանենք»: Այնուհետև սկսեցին բաշրջել, ծաղրել և սպառնալ: Բարբարոսների ծեռքից փրկվեցինք ռազմական ուսումնարանի ռուս սամերի օգնությամբ [14]:

Ըստ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների, տարբեր գնահատականների զուտ ազգային պատկանելության համար բռնություններին զոհ է գնացել ավելի քան 400 հայ, այդ թվում՝ կանայք [15]: Նրանցից շատ շատերի մասին նոյնիսկ տեղեկություններ չկան: Դայտնի չէ, թե որտեղ են թաղվել և քանի հոգի են նրանք՝ անհայտ կորածները, սպանվածները, հրկիզվածները և պատշաճամբներից նետվածները:

Այդ ողբերգական իրադարձությունների ժամանակ, եթե կանաց մի մասը դեպքերի զոհ դարձավ ու դաժանաբար սպանվեց, ապա մյուս մասը ենթարկվեց ծեծի, անարգանքի, թալանի, ու վտարվեցին սեփական տներից: Բաքվում սպանվածների թվում էին Լենա Բաղդասարյանը, Զարվար Փաշայանը, Նորա Գրիգորյանը, Շուշանիկ Դարություն-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

վան և շատ ուրիշներ: Բռնագաղթվածներից շատ շատերը Երևան հասան ծեծված, ծանր վիճակում: Նրանցից ոճանք այդ բվում Սիրանուշ Առաքելյանը, Սոֆիա Բաղայլանը, Աննա Գարդիելյանը, Կառլառա Շողոխյանյանը, Նինա Կասպարովան, Անյա Մակարովան, Արույսակ Սարկոսյանը, Սիրանուշ Մանուկյան, Արաքյան Սկրտչյանը, Սարգենիկ Սարգսյանը, Աննա Սարկիսովան, Աննա Օսիպյանը, Լուսիկ Սարմակայանը մահացան Երևանի հիվանդանոցներում[16]:

Զոհվածների ծշգրիտ թիվն անհնար է պարզել, քանի որ որևէ հետաքննություն չանցկացվեց:

Խաղաղ բնակչների ջարդերն ու սպանությունները շարունակվեցին մինչև հունվարի 20-ը, երբ քաղաք մտան խորհրդային բանակի ստորաբաժանումները: Եթե Սումգայիթում խորհրդային գորքերը «ուշացան» 3 օրով, ապա Բաքվում՝ մի ամբողջ շաբաթով: Զինվորականները քաղաք մտան միայն այն ժամանակ, երբ այնտեղ գրեթե հայ չեր մնացել: Աղրբեջանի իշխանությունները տեղի ունեցածը փորձում էին ներկայացնել պարզապես մասսայական անկարգություն: Մինչդեռ սպանությունները, կողոպուտները, բռնաբարությունները, ահաբեկումները հստակ պլանավորված էին:

Բաքվի «սև հունվարը» դատապարտեց Ելենա Բոները, ով դեպքերի կապակցությամբ տված իր հայտարարության մեջ ասաց. «Ինչո՞ւ երկիրը կենտրոնական հեռուստաթեսությամբ չտեսավ Սումգայիթի մասին ֆիլմը: Ինչո՞ւ մենք չիմացանք՝ դատապարտվեցի՞ն արդյոք Սումգայիթի, Բաքվի և այլուր կազմակերպված ջարդերի մասնակիցները: Ովքե՞՞ն և որտե՞՞ն նրանց դատեցին... Ինչո՞ւ, երբ գրեթե միլիոնանոց հակահայկական հանրահավաքներ էին անցկացնում Բաքվում, իր թե հայերը կտրում են Թոփխանայի սուլթ անտառակը, երկրում և Աղրբեջանում ցույց չտվեցին այդ վայրը: Բոլորն էլ կտեսնեին, որ ոչ մի անտառակ էլ չկա»[17]:

Բաքվի ջարդերի ժամանակ կանանց դեմ իրականացված ոտնձգությունների մասին է վկայում նաև ՀՀ պատվիրակության գեկույցը, որը 1997թ. հուլիսի 17-25-ը ներկայացվել է ՍԱԿ-ի Կանանց դեմ խորականության վերացման կոմիտեի 17-րդ նատաշրջանի ժամանակ, որում ասվում է. «1990թ -ի հունվարին 5 օրվա ընթացքում Աղրբեջանի մայրաքաղաք Բաքվում սպանում, տանջում, կողոպսում և նվաստացնում էին հայկական համայնքի ներկայացուցիչներին: Նոր կանայք և երեխաները ենթարկվում էին սեռական ոտնձգությունների, մանկահասակ աղջիկներին պատվագրկում էին ծնողների ներկայությամբ, նրանց մեջքի վրա խարանում էին քրիստոնեական խաչ, մարդկանց հետապնդում էին միայն նրանց քրիստոնեական հավասի համար»[18]:

1990 թվականին Բաքվում կատարվածը ցեղասպանություն է, որը կատարվեց խաղաղ բնակչության հանդեպ զուտ իրենց ազգային պատկանելության համար: Կատարվածի համար ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել, տուժածներից ոչ ոքի չեն հատուցել ոչ բարոյական, ոչ էլ նյութական առումով:

1988-1990թթ. աղրբեջանական իշխանությունների իրականացրած հայերի զանգվածային ջարդերի հետևանքով վտարանդի դարձավ Աղրբեջանի ողջ հայկական համայնքը՝ առնվազն կես միլիոն մարդ: Կոտորածները ոչ այլ ինչ էին, քան պատասխանը Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության խաղաղ ցույցերի, որոնցով պահանջվում էր իրականացնել ինքնորոշման սահմանադրական իրավունքը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. [http://masters.armeniansgenocide.am/content\\_images/file/Yndunelutyun/17\\_\\_\\_\\_\\_.pdf](http://masters.armeniansgenocide.am/content_images/file/Yndunelutyun/17_____.pdf)
2. Շահմուրադյան Ս., Հայոց պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան 1989, стр. 12:
3. Նույն տեղում, стр. 14.
4. «Նովոստի Արմենիա», 24 փետրվարի, 2001:
5. Աղաջանյան Յ., Հարեր, Պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Ստեփանակերտ, 2012, էջ 449:
6. Շահմուրադյան Ս., սկզբ. աշխատանքում, Երևան, 1989, стр. 18,19.
7. Դե Վաալ Թոմաս, Չեռնի սադ. Արմենիա և Ազերբայջան մասնաւոր հարց 1991-2017, Երևան, 2014, стр. 54.
8. Դե Վաալ Թոմաս, Չեռնի սադ. Արմենիա և Ազերբայջան մասնաւոր հարց 1991-2017, Երևան, 2018, էջ 30-31:
9. Աղաջանյան Ե., Հայոց պետականության քառորդ դարը 1991-2017, Երևան, 2018, էջ 30-31:
10. Աղաջանյան Ե., Հայոց պետականության արխիվ «Թերթելով պատմության էջերը» /սկավառակ/:
11. Դե Վաալ, սկզբ. աշխատանքում, Երևան, 2014, стр. 142.
12. «Խորհրդային Հայաստան», 23 հունվարի 1990:
13. Հակոբյան Թ. , Կանաչ ու Սև Աղցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2008, էջ 93:
14. Մովսեսովա Ի., Հովնանյան Ա., Բաքվի ջարդերը, Երևան, 1992, էջ 219:
15. «Առավոտ», 20 հունվարի, 2015:
16. Մովսեսովա Ի., Հովնանյան Ա., էջ 112:
17. “Կոմմունիստ”, 18 ավգոստա 1990.
18. «Նովոստի Արմենիա», 18 հունվարի, 2010:

**ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Հայ կանայք 1988-1990թթ. Սումգայիթի և Բաքվի ոճրագործությունների  
հորձանուտում  
Խսկուի Ավանեսյան**

Համազգային պայքարը ճնշելու նպատակով Աղրբեջանը դիմեց վայրագ բռնությունների: Պետական մակարդակով իրագործվեց ցեղասպանություն, ջաղող Աղրբեջանի Սումգայիթ և Բաքու քաղաքներում: Առավել դաժան գործողություններ իրականացվեցին հայ կանանց նկատմամբ՝ նվաստացում, տանջամահ անել՝ հենց հարազատների աչքի առաջ: Այդ ողբերգական իրադարձությունների հորձանուտում հայտնված կանանց վկայություններում բազմաթիվ են ջարդարարների վայրագությունների նասին փաստերը: Սանձազերծված բռնությունների առթիվ բռղոքի ձայն բարձրացնող կանայք պահանջեցին պատժել հանցագործներին: Զնայած հակառակորդի ճնշումներին՝ կանայք դիմակայեցին բոլոր մարտահրավերներին և իրենց նշանակալի դերը ունեցան Աղցախյի ազգային-ազատագրական պայքարում:

**РЕЗЮМЕ**

**Армянские женщины в водовороте  
Сумгайтских и Бакинских преступлений  
1988 – 1990гг.  
Искуhi Аванесян**

**Ключевые слова:** Азербайджан, Сумгайт, Баку, армянские женщины, права, насилия, жалобы, жертвы, митинги, доказательства, геноцид, депортация, борьба.

Для подавления нац. борьбы Азербайджан применил жестокие насильственные меры. На государственном уровне был совершен геноцид армянского населения в азербайджанских городах Баку и Сумгайт. Наиболее жестокие действия были совершены в отношении армянских женщин: унижения, пытки, часто в присутствии их родных. Множество женщин, оказавшихся в омуте этих трагических событий, свидетельствуют о бесчисленных зверствам погромщиков. Женщины выразили свой протест против безнаказанного насилия, потребовав наказать преступников. Несмотря на давление противника, женщины сумели противостоять всем вызовам и сыграть значительную роль в национально-освободительной борьбе Арцаха.

**SUMMARY**

**The Armenian Women in the Vortex of Sumgait and Baku Crimes during 1998-1990  
Iskuhi Avanesyan**

**Keywords:** Azerbaijan, Sumgait, Baku, Armenian women, rights, violence, complaints, casualties, meetings, evidence, genocide, deportation, battle.

In order to suppress the national struggle, Azerbaijan undertook ferocious violence. The massacres in Azerbaijani cities Baku and Sumgait were realized on the state level. The most severe cruelties were towards the women – humiliation, tortures in presence of relatives. There exist numerous facts of violences from testimonies of women who were in those tragic events. Because of rampant violences, the protesting women claimed to punish criminals. Despite the pressures of the enemy, women resisted challenges and had their significant role in the Artsakh national struggle.